# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 մայիսի 2015 թվականի N 68-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով և <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ և 68-րդ հոդվածների դրույթներով, համաձայն ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի <<Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> N 202-Ն որոշմամբ հաստատված կարգի, **որոշում եմ՝**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2014 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժինների չափը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության փակ բաժնետիրական ընկերությունների տնօրեններին՝ մինչև 2015թվականի հոկտեմբերի 1-ը, սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել շահութաբաժնի առկա պարտավորությունը:

3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2015թ. մայիսի 27
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2015թ.մայիսի 27-ի N 68-Ա որոշման

# ՑԱՆԿ

2014 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով ՀՀ 2015թ. պետական բյուջե շահութաբաժին վճարող փակ բաժնետիրական ընկերությունների

| N | Ընկերության անվանումը | Վճարման ենթակա շահութաբաժնի գումարի չափը (հազ. դրամ) |
|---|---|---|
| 1 | «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ | 1163.0 |
| 2 | «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ | 349.0 |
| 3 | «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ | 440.0 |
| 4 | «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ | 580.5 |
| 5 | «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ | 256.2 |
| 6 | «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ | 62.0 |
| 7 | «Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ | 73.0 |
| 8 | «Տաթևի առողջության կենտրոն» ՓԲԸ | 5.5 |
| 9 | «Վերիշենի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ | 16.0 |
| 10 | «Դարբասի առողջության կենտրոն» ՓԲԸ | 8.5 |
| 11 | «Անգեղակոթի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ | 10.0 |
| 12 | «Նորաշենիկի ԱԱՊԿ» ՓԲԸ | 42.3 |
| 13 | «Բռնակոթի ԱԱՊԿ» ՓԲԸ | 21.0 |
| 14 | «Գորայքի ԱԱՊԿ» ՓԲԸ | 4.0 |
| 15 | «Տեղի ԱԱՊԿ» ՓԲԸ | 23.2 |
| 16 | «Ճինուհայրի ԱԱՊԿ» ՓԲԸ | 34.4 |
| 17 | «Խնձորեսկի ԱԱՊԿ» ՓԲԸ | 9.2 |

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռ.Ղազարյան